600.0057.24.02.21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

24 փետրվարի 2021 թվականի №57Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-Ի №125Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը, և հաշվի առնելով «ՍՈԼԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի փետրվարի 10-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի մայիսի 2-ի «ՍՈԼԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Շերամ» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №125Ա որոշմամբ «ՍՈԼԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված «Շերամ» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ№0640 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգել տասնվեց ամսով՝ որոշման 1-ին կետում «մինչև 2021 թվականի մարտի 3-ը» բառերը և որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում «մինչև 2021 թվականի մարտի 1-ը» բառերը փոխարինելով «մինչև 2022 թվականի հուլիսի 3-ը» բառերով:

2. «ՍՈԼԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ԼԷ№0640 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Շերամ» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

   1) մեկամսյա ժամկետում «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի մարտի 26-ի №1755-02 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված երաշխիքի համաձայն երաշխավորված 10 000 000 (տասը միլիոն) դրամ գումարից 5 000 000 (հինգ միլիոն) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

   2) քառասունհինգօրյա ժամկետում հանձնաժողով ներկայացնել 10 000 000 (տասը միլիոն) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2022 թվականի օգոստոսի 17-ը գործողության ժամկետով:

3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի մարտի 3-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
24 փետրվարի 2021թ.